«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 **օգոստոսի** 2018 **թվականի**

Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնը միացման ձևով վերակազմակերպելու և կառավարման ամբիոնին միացնելու մասին

Լսելով և քննարկելով «**Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնը միացման ձևով վերակազմակերպելու և կառավարման ամբիոնին միացնելու մասին**» հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. համաձայն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2018 թվականի հուլիսի 2-ի N 1 որոշման՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպական կառուցվածքում կատարվել է հետևյալ փոփոխությունը՝ հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնը միացման ձևով վերակազմակերպվել է՝ միացվելով կառավարման ամբիոնին: Հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի ընդհանուր ուսումնական բեռնվածության ծավալը շատ փոքր է, հաստիքները քիչ են, ինչի պատճառով մասնագիտական ներուժը թույլ է և այդպիսի ծավալի դեպքում հնարավոր չէ լուրջ մասնագիտական, ակադեմիական քննարկումներ կատարել:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ի կատարումն «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2018 թվականի հուլիսի 2-ի N 1 որոշման՝ հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով կառավարման ամբիոնին:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Կ. Լ. Աթոյան**

2018 թ. Օգոստոսի 30
Երևան